



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1715
Ապրիլ 5, 1994

Հոգեշնորհ
Տ. Վահան Վրդ. Յովհաննէսեան
Հովի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ֆէրլոն.

Սիրելի Հայր Վահան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 11, 1994 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուար 30, 1994-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք բուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Թովմաս Աշպահեան
- Պըրթ Պետրոսեան
- Արա Հուրտաճեան
- Կապրիէլ Գապրիէլեան
- Կրէկ Նաճարեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Տարեկան Տեղեկագրի էջ 4-ի պաշտօնական ստորագրութիւնները կը պակսին (կը ներփակուի յիշեալ էջը. գայն ստորագրել տալէ ետք անմիջապէս վերադարձուցէք Առաջնորդարան): 1993 տարուան համայնքիդ հաշուական ընդհանուր գումարը Տարեկան Տեղեկագրի եւ Ծխական Տեղեկագրի մէջ կը տարբերին. անոնք պէտք է համապատասխանեն իրարու: Համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է կատարուի երկպատիկ ցանկի վրայէն եւ գաղտնի բուէարկութեամբ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՄԱՄԵԱՆ
Առաջնորդ

1994 PARISH ASSESSMENT DATA

I.	1993 Membership:	-----199-----	
II.	Number of Clergy:	-----1-----	
III.	<u>Gross PCP:</u>	10,724	
	Plate Collection	\$-----	
	Pledges	-----11,150-----	
	Dues	-----21,010-----	
	Easter Yughakin	-----6,489-----	
	Christmas Yughakin	-----5,945-----	
		TOTAL	\$55,318-----
IV.	<u>Number of Sacraments and Sacramentals: (Since New Priest)</u>		
	Baptisms	-----11 Infant, 1 Adult-----	
	Chrismations	-----0-----	
	Engagements	-----0-----	
	Weddings	-----3-----	
	Funerals	-----6-----	
V.	<u>Number of Delegates:</u>	-----2-----	

We hereby certify that the above information is accurate to the best of our knowledge and information.

 Parish Council Chairman
 Sarkis (Rex) Kachigian

 Parish Council Treasurer
 Robert Ishkanian

 Auditing Committee Chairman
 Charles Pinajian

 Reviewed by Parish Priest
 V. Rev. Fr. Vahan Hovhannessian

THE ABOVE FIGURES MUST COINCIDE WITH THOSE SPECIFIED ON FINANCIAL REPORT SECTION I (pages 5-6) AND THE MEMBERSHIP DATA SHEET (page 2).